

**«ՓՈՑԽ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ
ԲԱՌԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ**

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ա. Ա.

Ըստ ազգագրական նյութերի՝ փոցխը գործածվել է հողավարման ու հողահար-
դարման և դաշտահավաքի աշխատանքներում: Ըստ այդմ էլ՝ փոցխը ինչպես միննույն,
այնպես էլ տարբեր բնակավայրերում կոչվել է նաև այլ բառանուններով: Օրինակ՝ Հ.
Մալխասյանը, փաստելով, որ Ջավախքում գործածվում է երկու տեսակի փոցխ՝ մեծ
փոցխ, որը «գործ է ածուում ցանոցին արօրի փոխարեն այն արտերում, ուր արօրն անգոր
է», երբ հողը դեռ «պինդ է բոյսերի ու խոտերի հազարաւոր արմատներով», և փոքր
փոցխ, որով արտում հավաքում են «քաղուորից յետոյ երբ եղընուորը լասը [որանը] տա-
նում, փուլով է շինում՝ լասի տակից մնացածը»¹: Մեծ փոցխի կողքին նշում է նաև
տափան կոչվող գործիքի մասին, որը գործածվում է հողը հարթեցնելու նպատակով²,
Բենսեն Բուլանըխում գործածվող վարի և հողահարթեցման գործիքների շարքում նշում
է նաև մանկեռ և ցաք կոչվող գործիքները³, Ս. Ամատունին նշվածներին հավելում է
կռանդիլ անվամբ գործիքը, «որով հաւաքում են կալի եզերքը, հնձած խոտը»⁴ և այլն:

«Փոցխ» հասկացությունը՝ որպես բառահոդված, ընդգրկված է Հայերենի բար-
բառագիտական ատլասի (ՀԲԱ) նյութերի հավաքման ծրագրի «Բառային զուգաբանու-
թյուններ» բաժնում (հ. 96):

Ըստ Հ. Աճառյանի՝ փոցխ բառը ծագում է վրաց. **ფოცხი** փոցխի «փոցխ, երկ-
րագործական սանտր» ձևից: Հ. Աճառյանը նշում է, որ բառի «բուն կովկասեան լինելուն
ապացոյց են ո՛չ միայն հայ բառի յետնութիւնը, այլ և միւս կովկասեան լեզուների մէջ
ընդհանուր տարածուած լինելը՝ զանազան նշանակութիւններով. այսպէս՝ վրաց.
ფარცხი փարցխի, **ფარցხი** ֆարցխի, **მარცხი** մինգր. ֆարցխի, **ჩინჯილ** ինգիլ. ֆարցխ, **არქაა** արխաա. **აფარცხა** «տա-
փան», վրաց. **ფარცხვა** փարցխվա «տափանել», **ფარცხატი** փարցխատի «սանտր»,
ფეცხი փուցխի «երեքժանի», լազ. բուցխի «փոցխ», սվան. **ლახაგხა** «խոտանոց»⁵:

¹ Մալխասեան Զ., *Հայ գեղջուկի ալբոմը* (Ազգագրական հանդես, գիրք Գ, 1898, N 1, Թիֆլիս, 1898, էջ 380, 383):

² Նույն տեղում, էջ 381:

³ Բուլանըխ կամ Հարք գաւառ, հաւաքեց **Բենսէ**, Թիֆլիս, 1901, էջ 58: Բենսեն նշում է, որ Բուլանըխում փոցխ կոչվող գործիքը «քաղած ցորենի և խոտի աւելի մանրուկները հաւաքելու կը ծառայէ» (տե՛ս նույն տեղում, էջ 56):

⁴ Ամատունի Ս. վրդ., *Հայոց բառ ու բան, Վաղարշապատ*, 1912, էջ 371, 659:

⁵ Աճառյան Հ., *Հայերեն արմատական բառարան* (ՀԱԲ), հ. Դ, Ե., 1979, էջ 521: Տե՛ս նաև **Климов Г. А.** *Этимологический словарь картвельских языков*, М., 1964, с. 189-190.

ՀԲԱ նյութերում փոցխ բառանունն իր հնչյունական տարբերակներով առկա է հայերենի բարբառների ավելի քան 200 խոսվածքներում:

Գրական լեզվում ամրագրված փոցխ տարբերակը գրանցվել է հայերենի բարբառների 44 խոսվածքներում և ընդգրկում է Արաբկիրի (1՝ Արաբկիր), Մուշի (խոսվածքների քանակը՝ 14), Վանի (4), Մասունի (1՝ Հոսներ), Տալվորիկ-Մոտկանի (1՝ Կոռ), Կարինի (5), Երևանի կամ Արարատյան (9), Բայազետի (3՝ Մուսուն, Քուչակ /ՎԲ/, Կարբի /ՎԲ/), Խոյ-Մարաղայի (5) բարբառները և Ղազախ-Կիրովաբադի (1՝ Չովդար /Քարհատ/) միջբարբառը:

Հնչյունական՝ փոծխ, փու(ըցխ, փոծեղ, փոցըխ, փոցղ, փոցխը, փու(ըցխ, փուցխ, փոծըղ և այլն, տարբերակներով բառանունն առկա է հայերենի բարբառների 156 խոսվածքներում և ընդգրկում է Մուշի (37), Մասունի և Տալվորիկ-Մոտկանի (20), Վանի (10), Կարինի (25), Դիադինի (4), Մարաշ-Ջեյթունի (2՝ Մարաշ, Ջեյթուն), Պոլսի (1՝ Ռոդոսթո), Խարբերդ-Երզնկայի (1՝ Բազմաշեն), Երևանի կամ Արարատյան (32), Բայազետի (4), Ջուղայի (2՝ Փարաղաշ, Սինագան), Խոյ-Մարաղայի (10), Ղարաբաղի (5), Ղազախ-Կիրովաբադի (3) միջբարբառներն ու բարբառները: Եվդոկիայի միջբարբառում արձանագրվել է փոխ տարբերակը, իսկ Կարինի բարբառում (Վրաստանի Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջանների 9 գյուղերի խոսվածքներ)՝ փոսխ, փոսղ / փոսղ, փուսխ տարբերակները:

Երևանի և Վանի բարբառներում արձանագրվել է փոցխել «փոցխով հողը քերելով քարերն ու խոտերը հանել» բայը⁶, Խոփայի խոսվածքում՝ փոցխուլուշ «փոցխել» տարբերակը⁷: Գրանցվել են նաև բառակազմական տարբերակներ: Հ. Աճառյանը փաստել է փոցխվոր (Ախալքալաք), փոցխավոր (Երևան) բառաձևերը⁸: Ըստ Ս. Ամատունու՝ փոցխաւոր «հնձածը փոցխով հաւաքողը, և վարածը փոցխով հարթողը» բառը գործածվել է Արարատյան գավառում, Շիրակում և Մուշում⁹: Բարբառագիտական գրականության մեջ գրանցվել են նաև փոցըխվոր, փոցխըվոր տարբերակները¹⁰: Ս. Վարդանյանը Խոփայի համշենահայերի խոսվածքում գրանցել է փուցխիշ (-իշ ածանցով) տարբերակը¹¹:

ՀԲԱ նյութերում գրանցվել են «փոցխ» հասկացության մի շարք բառանվանումներ՝ ցաքան, տափան, մանկեռ, սանդր, ակռան, ճանկոիկ,

⁶ Աճառեան Հ., Հայերէն գաւառական բառարան (ՀԳԲ) (= Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ), Թիֆլիս, 1913, էջ 1082:

⁷ Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Ե., 2009, էջ 325:

⁸ ՀԳԲ, էջ 1082:

⁹ Սահակ վրդ. Ամատունի, նշվ. աշխ., էջ 659:

¹⁰ Համապատասխանաբար Բաղդասարյան-Թափալցյան Ս. Հ. Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Ե., 1973, էջ 262, Մկրտչյան Հ. Մ., Կարնո բարբառը (հնչյունաբանություն, ձևաբանություն, բառարան), Ե., 1952, էջ 184:

¹¹ Վարդանյան Ս., նշվ. աշխ., էջ 324:

հոսելի, քառեշտ, չանգյալ, գրաբի, գալբարի, կռանթի, տրմուխ, դասխալա, ալաքեշ, դան, չոփկուլալի, քամելի և այլն:

1. Ցաքան: Ցաքանը փշոտ թփերից ու ցախերից կազմված երկրագործական գործիք է, որով նոր ցանած արտը հավասարեցնում են ու ծածկում սերմը: Բառանունը վկայված է XIV դ. Գրիգոր Տաթևացու «Քարոզգրքում»՝ *մԵւ յորդորակն ցագանն որ հաւասարէ և ծածկէ սերմն*¹²: Հ. Աճառյանը նշում է, որ բառանունը «կենդանի է» բարբառներում ցաքան կամ ցաք ձևով, «բայց ունինք նաև Շտ. ծաճկաձ ն, որից երևում է, որ հին ձևն է ցագան»:

Հ. Աճառյանը «Ցագան» բառահոդվածում չի տալիս բառի ստուգաբանությունը, իսկ «Հայոց լեզվի պատմություն» գրքում նշում է, որ այն հնդեվրոպական ծագում չունի¹³: Մակայն «Ցախ» բառահոդվածում, ցախ բառը համարելով բնիկ հայկական բառ, X դ. Խոսրով Անձևացու վկայած ցախել բառը նա մեկնում է որպես «ցանքը ցախերով տափնել»¹⁴, այսինքն՝ «ցաքանել»: Իսկ որ բառը գործածված է հենց «ցաքանել» իմաստով, երևում է Անձևացու երկի համապատասխան հատվածի համատեքստից. «Եւ թէ անդաստան և այգի անսերմ և անգործ չպտղաբերի... նախ կակդեն և ապա զազգ ազգ սերմանցն սերմանեն... Սոյնպէս և սուրբ Լուսաւորիչն օրինակէ երկրի սերմանց զսերմ աստուածապաշտութեան. և յիշէ զակօսելն և զցախելն և զայլսն. և ասէ. Նոյնպէս պարտիք կակդել զանդս մտացն, զի սերմանիքն սուրբ և օգտակարք ցանիցին ի ձեզ»¹⁵ (այս և հետագա ընդգծումներն իմն են – Ա. Ա.):

Ն. Մկրտչյանը բառը փոխառյալ է համարում աքքադերեն *zāk- 8* «փշրել, մանրել, ...» ձևից¹⁶:

Գ. Ջահուկյանը, ցախ-ը (բարբառային ցաք) համարելով հ.-ե. ծագման բառ (*ska'khā, *skak-), «երկրագործություն» բառիմաստային թեմատիկ խմբում ընդգրկում է նաև ցաք(ան) ածանցավոր ձևը¹⁷՝ նշելով հնդեվրոպականից հայերենին անցնելիս հնչյունա-

¹² Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն եօթնալոյս վարդապետի, Կ. Պոլիս, 1741, էջ 114:

¹³ Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս Ա, Ե., 1940, էջ 124:

¹⁴ ՀԱԲ, հ. Դ, էջ 446:

¹⁵ Մեկնութիւն ժամանակագրութեան, արարեալ երանելոյն Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի, Կ. Պոլիս, 1840, էջ 19:

¹⁶ Мкртчян Н. А. Семитские языки и армянский, Е., 2004, с. 203-204. Ի դեպ, հեղինակը ավելի վաղ հրատարակած մի հոդվածում բառը ծագեցրել էր աքքադերեն *zāqu-* «փոցիսել» ձևից [տե՛ս նույնի՝ “Отклонения” от закономерностей армянского языка в свете данных аккадского языка, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1979, N 4, էջ 220], որը հերքել էր Բ. Դյակոնովը՝ նշելով, որ աքքադերեն այդպիսի բառ չկա և անգամ էթե լիներ, ապա այն չէր կարող տալ հայերեն ցաք (տե՛ս Դյակոնով Ի. М. К древневосточному субстрату в армянском языке. Նույն տեղում, 1981, N 1, էջ 72):

¹⁷ Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան (ՀԼՊՆԺ), Ե., 1987, էջ 130, 212, 277:

հետևյալ փոփոխությունը՝ «հ.-ե. *ph, *th, *kh- ի դիմաց՝ սովորական փ-, թ-, խ-ի կողքին նաև բ, գ, դ՝ ...ցախ (բ. ցաք-) և ցագան (>բ. ծաճկաճն)»¹⁸: Վ. Համբարձումյանը հայերենի՝ երկրագործության բնագավառի հնդեվրոպական ծագում ունեցող բառերի շարքում նույնպես նշում է այդ բառանունը¹⁹:

ՀԲԱ նյութերում ցաքան բառանունը գրանցվել է Մոկսի Սեդ և Արմավիրի մարզի Ներքին Խաթունարխ /ՎԲ Սալմաստից/ գյուղերի, իսկ ցաճքան, ցաճքաճն տարբերակները՝ Կապանի (Սյունիքի մարզ) և ԼՂՀ Հասանդալա-Մարայան սարովու Չղրան գյուղերի խոսվածքներում: Բառանվան ցաք տարբերակը գրանցվել է Մուշի Կըտրածքար և Կոճեր, Տավորիկ-Մոտկանի Նիչ, Սասունի Գյարմավ գյուղերի խոսվածքներում: Վանի Հարպերտ և Քարադաշտ գյուղերի խոսվածքներում արձանագրվել են համապատասխանաբար ցաճք՝ և ն հնչյունի հավելմամբ ձևավորված ցանք հնչյունական եզակի տարբերակները:

Ըստ Հ. Աճառյանի՝ ցաք տարբերակը գործածվել է Բուլանքիում, Մուշում և Նոր Բայազետում, իսկ ցաքան տարբերակը՝ Խիանում, Մեղրիում և Ղարաբաղում²⁰: Բարբառագիտական և ազգագրական գրականության մեջ ցաք, ցակ տարբերակները փաստվել են Բալուի, Ալաշկերտի, Բաղեշի Խուլթիկ և Դերսիմի Չմշկաձագ, Չարսանձագ, Քղի, Խնձորեկ գյուղերի²¹, իսկ ցաքան տարբերակը՝ Արմավիրի մարզի գյուղերի²² խոսվածքներում: Արձանագրվել են նաև ցե՛գաճն (Մեղրի, Կաքավաբերդ /Սյունիքի մարզ/)²³, ցաճ/քան (Հաղբուր /ԼՂՀ/)²⁴, ցաճ/քաճ/ն (Ներքին Ճամբարակ /Գեղարքունիքի մարզ/, Գորիս /Սյունիքի մարզ/)²⁵ տարբերակները: Շատախում, ինչպես արդեն նշվել է, գործածվել է ծաճկաճն ձևը:

Հ. Սարգսյանը ցաքել «սերմանուած արտը յարդարել, ակօսները գոցել» բայը գրանցել է Բալուի խոսվածքում, ընդ որում, այդ խոսվածքում այդ նույն բառը գործածվել է նաև փոխաբերական իմաստով:

¹⁸ Նույն տեղում, էջ 253:

¹⁹ Համբարձումյան Վ. Գ., Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության, Ե., 1998, էջ 46:

²⁰ ՀԱԲ, հ. Դ, էջ 446, ՀԳԲ, 1053:

²¹ Բալու. իր սովորոթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը, աշխատասիրեց Յարութիւն քին. Սարգիսեան (Ալեուր), Գահիրե, 1932, էջ 87, 543, Մադաթյան Բ. Մ., Ալաշկերտի խոսվածքը (Ապարան-Արագածի տարածք), Ե., 1985, էջ 56, Տարօնեան Ե., Բաղեշի նահանգի Խուլթիկ գիւղի բարբառը, Անթիլիաս, 1961, էջ 175, Բաղրամյան Ռ. Հ., Դերսիմի բարբառային քարտեզը, Ե., 1960, էջ 171:

²² Բաղդասարյան-Թափալցյան Ս. Հ., նշվ. աշխ., էջ 247:

²³ Աղայան Էդ., Մեղրու բարբառը, Ե., 1954, էջ 288, Մուրադյան Հ. Դ., Կաքավաբերդի բարբառը, Ե., 1967, էջ 206:

²⁴ Պողոսյան Ա. Մ., Հաղբուրի բարբառը, Ե., 1965, էջ 73:

²⁵ Մեծունց Բ. Խ., Շամշադին-Դիլիջանի խոսվածքը, Ե., 1989, էջ 177, Մարգարյան Ալ., Գորիսի բարբառը, Ե., 1975, էջ 368:

տով՝ «ծածկել, պահել, ուրիշին չգիտցնել»²⁶: Դերսիմի Չմշկաձագ, Չարսանձագ, Քղի, Խնձորեկ գյուղերի խոսվածքներում արձանագրված են ցաքել «տափանել»²⁷, Ալաշկերտի խոսվածքում՝ ցակել «տափանել» (փոխաբերական իմաստով՝ «հետքը կորցնել», «համահարթել»)²⁸: Հ. Աճառյանը վկայել է ցաքել (Նոր Բայազետ) և ցաքանել (Խիան, Ղարաբաղ) «ցաքանով արտին հողը հաւասարեցնել» բայերը, ցաքանուր «ցաքանող մշակ» (Խիան) և ցաքլից «ցաքանին մասերէն մէկը» բառակազմական տարբերակները²⁹: Ք. Մաղաթյանը Արագածոտնի մարզի Ապարանի և Արագածի շրջաններում վերաբնակված ալաշկերտցիների խոսվածքում արձանագրել է ցակվոր «տափան անող», ցակլիս և ցակճաղ «տափանի ճյուղ» տարբերակները³⁰: Ա. Մարգարյանը Գորիսի տարածաշրջանի խոսվածքներում գրանցել է ցիքաա և նել «ցաքանով ցանած արտը տափանել՝ հավասարեցնել» տարբերակը, ցիքնաա և նել «ցաքանող մշակ» ածանցավոր բառը և հետևյալ բարդությունները՝ ցիքնամար, ցիքնամեր «ցաքանի գլխավոր երկու ճյուղերը, որոնց հագցվում են ճախերը», ցիքնըքաշի «ցաքանը գետնից բարձր պահող երկճյուղ փայտը»³¹:

2. Տափան: Տափանը հողը հարթելու, սերմը հողով ծածկելու գործիք է: Բառանունը կազմված է տափ և -ան ձևություններից: Բառանվան մեկնության և ծագման վերաբերյալ կան տարբեր տեսակետներ:

Ըստ ՆՀԲ-ի՝ տափ-ը նշանակում է «տափարակ՝ որպէս գետին տափեալ և դաշտաձև», իսկ տափելը՝ «տափանել. հարթել զանդս տափանաւ, որ է բահաձև կամ վանդակաձև երկաթի ժանեօք»³², այսինքն՝ ՆՀԲ-ն տափը համարում է հարթություն, իսկ տափել-ը՝ հարթել: ՀԱԲ-ը տափ-ը համարում է «հարթ տափարակ դաշտ»³³: Երկու բառահոլովածներում էլ տրված չէ բառի ստուգաբանությունը: Քննարկելով վերոնշյալ բացատրությունները և մատենագրական տվյալները, ինչպես նաև տոփել «ծեծել, սպիտակեղէնը լուալով մաքրելու համար փայտով ծեծել» բայը (որը, ըստ Հ. Աճառյանի, բնիկ հայկական բառ է³⁴)՝ Է. Աղայանը գտնում է, որ տափել և տոփել բառերը ծագում են հնիս. *deph «խփել, հարվածել, բախել, ոտքով կոխել» արմատի *daph և *doph ձևերից՝ հետագայում ստանալով «հարվածելով հարթել», որից էլ «հարթիչ» (տափան, տոփան)

²⁶ Սարգիսեան Յ. քին. (Ալեուր), նշվ. աշխ., էջ 543:

²⁷ Բաղրամյան Ռ. Հ., Դերսիմի բարբառային քարտեզը, էջ 171:

²⁸ Մաղաթյան Ք. Մ., նշվ. աշխ., էջ 243:

²⁹ ՀԳԲ, 1054:

³⁰ Մաղաթյան Ք. Մ., նշվ. աշխ., էջ 243:

³¹ Մարգարյան Ալ., նշվ. աշխ., էջ 487:

³² ՆՀԲ, հ. Բ, Ե., 1980, էջ 860, 861:

³³ ՀԱԲ, հ. Դ, էջ 390:

³⁴ Նույն տեղում, էջ 431: Հ. Աճառյանը տոփել բառից ծագեցնում է տոփան և տոփիչ 88888 լուսացքը ծեծելու փայտ 99999 բառաձևերը:

իմաստները³⁵: Գ. Զահուկյ անը գտնում է, որ «քիչ հավանական է տափի կապը տոփեմ բայի հետ», և տափ-ը համարում է փոխառություն հ.-ե. այլ (իրանական³⁶) լեզուներից³⁶:

Բառանունը վկայված է հայ մատենագրության մեջ. «Կոշտք տափանօք փխրին, և մարմինն ճգամբ»³⁷: Բացի այդ՝ Ոսկերեքանի «Մեկնութիւն Երկրորդ թղթոյն Թեսաղոնիկեցոց» երկի Գ ճառի ոսկերչարյան թարգմանության մեջ նշվում է. «Եթէ զերկիրն պատառելով թողուն, և չտափիցեն...»³⁸, որտեղ տափել բայը գործածված է «տափանել» իմաստով: Տափել-ը նույն իմաստով գործածվել է նաև «Գիրք վաստակոց»-ում. «Երբ ցանէ ոք զգետինն, և ի հետ փորչով զայ և ծեծէ, և զգուղան մանրէ և զսերմն ծածկէ՝ նա այն լաւ է. և ոչ թէ լծօք վաստակելն ի հետ, անճարողացն ճար է. և ի հետ տափելն անհնար պիտի. վասն զի այն բանայ զտակոհիս վայրապայր բուսոյն և չորացուցանէ»³⁹: Անշուշտ, տեքստում փորիչ բառն էլ գործածված է «տափան» նշանակությամբ, որով մշակը «զգուղան մանրէ և զսերմն ծածկէ»:

ՀԲԱ նյութերում տափան բառանունը գրանցվել է միայն Վանի բարբառի՝ Մոկսի Մամոտանց գյուղախմբի և Խիզանի (Բիթլիս) Շեն գյուղի խոսվածքներում:

Վանի բարբառում այդ գործիքին տրվել է նաև տափ անունը, ինչի մասին վկայել է Հ. Աճառյանը: Նույն բարբառում գործածվել է նաև տափ տալ «հողը ծեծելով՝ վրայի կոշտերը հաւասարեցնել» հարադրական բարդությունը⁴⁰:

Բարբառագիտական և ազգագրական գրականության մեջ տափան տարբերակն արձանագրվել է Երզնկայի, Սեբաստիայի, Կարինի, Երևանի կամ Արարատյան բարբառներում, Շատախի խոսվածքում⁴¹: Գրանցվել են նաև դափօն, դապօն (Համշեն), դափան (Դերսիմ), թափան (Կոզեն) հնչյունական տարբերակները⁴²:

³⁵ Աղայան Է. Բ., *Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974, էջ 144-146:

³⁶ ՀԼՊՆԺ, էջ 268, 603:

³⁷ ՆՀԲ, էջ 860:

³⁸ Նույն տեղում, էջ 861:

³⁹ Գիրք վաստակոց, թարգմանութիւն նախնեաց յարաբացի լեզուէ, Վենետիկ-Ս. Ղազար, 1877, Դուռն ԼԲ, էջ 27:

⁴⁰ ՀԳԲ, 1019, 1020:

⁴¹ Կոստանդյան Դ. Ս., *Երզնկայի բարբառը*, Ե., 1979, էջ 147, Գաբիկեան Կ., *Բաղկիրք Սեբաստահայ գաւառալեզուի*, Երուսաղէմ, 1952, էջ 524, Սկրտչյան Հ. Մ., նշվ. աշխ., էջ 180, Փշրանք Շիրակի ամբարներից, հաւաքեց Աղ. Մխիթարեանց (=Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա), Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 334, Մարկոսյան Ռ. Ա., *Արարատյան բարբառ*, Ե., 1989, էջ 316, Բաղդասարյան-Թափալցյան Ս. Հ., նշվ. աշխ., էջ 247, Մուրադյան Մ. Հ., *Շատախի բարբառը*, Ե., 1962, էջ 205:

⁴² Աճառյան Հ., *Քննություն Համշենի բարբառի*, Ե., 1947, էջ 255, Բաղդամյան Ռ. Հ., *Դերսիմի բարբառային քարտեզը*, էջ 101, Նույնի՝ *Կոզենի բարբառը*, Ե., 1951, էջ 201:

Ըստ ՀԲԱ նյութերի՝ Ալիջան (Սուրմալու) և Գյուրջի (Գյափլա/Իրան/) գյուղերի խոսվածքներում բառանունը գրանցվել է «կալսած կալը մի տեղ ժողովելու փայտյա կոթավոր գործիք» նշանակությամբ:

2. Աճառյանը արձանագրել է տափանել (Ղազախ), տափնել (Նոր Բայազետ) և տափել (Նոր Նախիջևան, Վան)՝ «արտերը ցանել է յետոյ տափանով կոշտերը փշրել...» բայերը⁴³: Երզնկայի բարբառում տափնել «տափանով հարթեցնել» բայը փաստել են Դ. Կոստանոյանը և Գ. Տեր-Վարդանյանը⁴⁴: Վկայված են նաև դափնել «տափնել» (Դերսիմ) դափնուշ «տափանել» (Համշեն) տարբերակները⁴⁵: Շիրակի խոսվածքներում գրանցվել է տափել «արտերը հարթել, տափանել» բառաձևը, որը գործածվել է նաև փոխաբերական իմաստով՝ «ծածկուիլ-պահուիլ, կուշ գալ»⁴⁶: Ի դեպ, Շիրակում տափան բառանունը գործածվել է սպառնալիք պարունակող մի դարձվածքում՝ «Տափանդ հենց սանտրեմ որ դալլաքն էլ չը կարողանայ»⁴⁷:

Արմավիրի մարզի որոշ խոսվածքներում գրանցվել են -վոր/ավոր ածանցներով կազմված տափանավոր/տափանվոր, իսկ Սեբաստիայի բարբառում՝ տափնեդուրել «տափանով դուրել» բառակազմական տարբերակները⁴⁸:

3. Մանկեռ: Մանկեռը երկրագործական գործիք է, որով ցանած արտը հավասարեցնում են և ծածկում սերմը: Բառանվան ծագման շուրջ կան տարբեր տեսակետներ: Ն. Մկրտչյանը հնարավոր է համարում բառի ծագումը աքքադական (ma)naqiru- «արմատախիլ անել, երեսանց պատռել» ձևից⁴⁹: Գ. Ջահուկյանը դա քիչ հավանական է համարում՝ նկատի ունենալով երկու բառերի նշանակությունների չհամընկնելը և հայերեն հին տեքստերում մանկեռ բառանվան բացակայությունը⁵⁰: Նշելով, որ հայերեն ուշ շրջանի կամ բարբառային բառերի համար կարելի է գտնել աքքադական համապատասխանություններ, որոնք «պատմական, իմաստաբանական, հնչյունական և այլ նկատառումներով... կասկածելի կամ պատա-

⁴³ ՀԳԲ, 1021:

⁴⁴ Կոստանոյան Դ. Մ., նշվ. աշխ., էջ 147, Տեր Վարդանեան Գ., Երզնկա-Կամախ գաւառաբարբառը եւ ազգագրական յուշեր, Երուսաղէմ, 1968, էջ 291:

⁴⁵ Բաղդամյան Ռ. Հ., Դերսիմի բարբառային քարտեզը, էջ 101, Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, էջ 255:

⁴⁶ Փշրանք Շիրակի ամբարներից, էջ 334:

⁴⁷ Նույն տեղում, էջ 149:

⁴⁸ Բաղդասարյան-Թափալցյան Ս. Հ., նշվ. աշխ., էջ 262, Գաբիկեան Կ., նշվ. աշխ., էջ 525:

⁴⁹ Мкртчян Н. А. "Отклонения" от закономерностей армянского языка..., էջ 220: Ավելի ուշ հրատարակած "Семитские языки и армянский" մենագրության մեջ (էջ 208) Ն. Մկրտչյանը նաև հնարավոր է համարում բառի ծագումը հինարարական minqār «բրիչ, հատիչ (քանդակագործի)» ձևից:

⁵⁰ Джаукян Г. Б. Об аккадских заимствованиях в армянском языке (ՊԲՀ, 1980, 4, էջ 101):

հական պետք է համարել», Գ. Ջահուկյանը մանկեռ բառը համարում է այդ կարգի համապատասխանություն⁵¹։ Ի.Դյակոնովը, հերքելով Ն. Մկրտչյանի տեսակետը, հնարավոր է համարում բառանվան ծագումը նորարամներեն *manqer* «հատիչ» ձևից⁵²։

ՀԲԱ նյութերում բառանունը մանգեռ ձևով գրանցվել է Վանի 3՝ Սիփան, Հորմորուր և Խարիդ գյուղերի խոսվածքներում։ Մանգեռ, մանգեռ, մանգեռ, մանգեռ, մանգեռ հնչյունական տարբերակներն արձանագրվել են հայերենի բարբառների 29 խոսվածքներում՝ ընդգրկելով Վանի (21), Խոյ-Մարադայի (7) և Երևանի կամ Արարատյան (1՝ Կաթնաղբյուր/Կոտայքի մարզ/) բարբառները։ Մանգառ, մանգրո, մանգրո, մանգ ըռ հնչյունական տարբերակներն արձանագրվել են Խոյ-Մարադայի բարբառի 4 և Վանի բարբառի 3 խոսվածքներում։ Եզակի հնչյունական տարբերակներ են գրանցվել ԼՂՀ Մարադա (մանգիր), Նախիջևանի Ազա (մանջիր), Վանի Կողպանց (մոնգեռ) գյուղերի խոսվածքներում։ Հին Ջուղայում «մանկեռ» նշանակությամբ գործածվել է մանգաղ տարբերակը։

Բարբառագիտական և ազգագրական գրականության մեջ փաստվել են մանգեռ «փայտյա զիզգազ» (Ալաշկերտ), մանգլեռ «ատամնավոր գործիք, որով հարթեցնում են ցանած ցելը» (Ուրմիա) տարբերակները⁵³։ Մանգեռ «խոշոր ատամներով փոցխ» բառաձևը գրանցվել է նաև Կարինի բարբառում⁵⁴։

ՀԲԱ նյութերում գրանցվել է նաև մաանգառ հնչյունական եզակի տարբերակը, որը Արարատի մարզի Ազատավան գյուղի խոսվածքում գործածվել է «կալսած կալը մի տեղ ժողովելու փայտյա կոթավոր գործիք» նշանակությամբ։

Արձանագրվել են մանկոեռ «մանկեռով հողը սերմին վրայ տալ, ցաքանելով սերմը ծածկել» (Մուշ, Նոր Բայազետ) և մանկոնեռ «փոցխով հողը քերել» (Բաբերդ, Սալմաստ), մանգլեռ (Ուրմիա), մանգրոնեռ «մանգեռով հողի կոշտերը փշրել» (Ալաշկերտ) բառաձևերը⁵⁵։

Գրանցվել են նաև բառակազմական տարբերակներ։ Արարատյան բարբառում արձանագրվել են խերկի մանկեռ, չալթուկի մանկեռ, տրակտորի մանկեռ անվանական հարադրությունները⁵⁶։

Մանկեռ բառանունը գործածվել է ժողովրդական երգերում.

⁵¹ ՀԼՊՆԺ, էջ 472։

⁵² Дьяконов И. М., նշվ. աշխ., էջ 68։

⁵³ Մադաթյան Զ. Մ., նշվ. աշխ., էջ 231, Ասատրյան Մ., Ուրմիայի (Խոյի) բարբառը, Ե., 1962, էջ 227։

⁵⁴ Մկրտչյան Հ. Մ., նշվ. աշխ., էջ 162։

⁵⁵ ՀԳԲ, էջ 752, Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 227, Մադաթյան Զ. Մ., նշվ. աշխ., էջ 231։

⁵⁶ Բդոյան Վ. Հ., Երկրագործական մշակույթը Հայաստանում, Ե., 1972, էջ 269։

Կոտ ու կես գարի ունիմ ցանելու համար...

Տունը մեկ մանկեռ տըվեք տափելու համար...⁵⁷:

4. Գրաբլի: Բառի փոխառության աղբյուրը հայերենի բառարաններում և գրականության մեջ չենք գտել: Կարծում ենք, որ այն փոխառված է ռուսերեն грабли «փոցխ» ձևից⁵⁸:

ՀԲԱ նյութերում գրաբլի տարբերակը գրանցվել է Նախիջևանի խոսվածքում: Հնչյունական տարբերակներով (գրաբբլ, կրռաբլի, կրռաբբիլ և այլն) բառանունը գրանցվել է հայերենի բարբառների Կարինի (1՝ /Մեծ Սամսար/ՎԲ/), Ղարաբաղի (19), Շամախիի (3), Ագուլիսի (1՝ Տանակերտ), պարսկահայոց (1՝ Շավրավա/Ն. Բուրվա-րի/) բարբառների Ղազախ-Կիրովաբադի (6) միջբարբառի որոշ խոսվածքներում: Շամխորի Օրջոնիկիձե և Բարսում գյուղերի խոսվածքներում գրանցվել է հրբաբլի տարբերակը:

5. Տրմուխ: Ըստ Հ. Աճառյանի՝ տրմուխ «հողի երեսի քարերը հալաքելու գործիք, փոցխ» բառը փոխառյալ է թուրքերեն տրմազ »տրմուխ» ձևից. այն «բնիկ ալթայական բառ է. հմմտ. Կազանի թթր. ... տрма «տափան, ցաքան», ...qol տрмасә «տրմուխ», ...трмаламаз «տափանել», Սիբիրի թթր. ...трнавуц «փոցխ». բուլղրի արմատն է թրք. ...трназ, չաղաթ. ...трназ, ույգուր. ...тэнград «եղունգ». ...трнамалаз, ... трмамалаз «քերել, ճանկռել»⁵⁹:

ՀԲԱ նյութերում բառանունը գրանցվել է միայն հնչյունական տարբերակներով (շուրջ 70 խոսվածք): Դըրմաղ, դըրմըխ, դըրմըղ, դըռմըխ, դըռմըղ, դըրմուղ, դըմըխ տարբերակներով բառանունը գրանցվել է 58 խոսվածքներում՝ ընդգրկելով հայերենի բարբառների արևմտյան խմբակցության Սեբաստիայի (4), Պոլսի (2՝ Չիբլուխու, Օրդու), Խարբերդ-Երզնկայի (1՝ Չմշկածագ), Մալաթիայի (1), Եդեսիայի (1՝ Կարմունջ), Հաջընի (1), Բեյլանի (1՝ Սովուլուխ և Աթըխ), Վանի (8), Համշենի (6) և արևելյան խմբակցության Երևանի կամ Արարատյան (6), Խոյ-Մարաղայի (9), Ղարաբաղի (9), Ղազախ-Կիրովաբադի (8), Հավարիկի (1) բարբառներն ու միջբարբառները: Արձանագրվել են նաև տըռմըխ (Եվդոկիայի միջբարբառ), կըրմըղ (Երզնկայի, Կարսի Քյուրակդարա, Ապարանի Ղալայի, Արագած և Ուտմա գյուղերի և Արարատի/Դավալու/խոսվածքներ) և դըմըղ՝ ր հնչյունի անկմամբ (Սյունիքի մարզի Շինուհայր և Արագածոտնի մարզի Տեղեր գյուղերի խոսվածքներ) տարբերակները:

ՀԲԱ նյութերում արձանագրված որոշ տարբերակներում առկա է դրափոխության երևույթը՝ դըմըրըխ (Սեբաստիա, Ասլանբեկ, Խասկալ,

⁵⁷ Հազար ու մի խաղ. ժողովրդական երգարան, խմբագրեցին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղյան, Ե., 1969, էջ 71:

⁵⁸ Фасмер М. Этимологический словарь русского языка, т. 1, М., 1986, с. 450.

⁵⁹ ՀԱԲ, հ. Դ, էջ 437: Ск'у նաև Этимологический словарь тюркских языков. Общетюркские и межтюркские лексические основы на буквы "В", "Г", "Д", М., 1980, с. 347-348.

Արմաշ, Պարտիզակ/Նիկոմեդիա/, Փոգա/Բոգդանովկա/, դըմըրըխ (Մարաղա/Իրան/ և Ցղնա/Նախիջևան/), դըղըրմա (Գետահովիտ/Տավուշի մարզ/):

ՀԲԱ նյութերում գրանցվել են նաև ծեռնաղըրմըղ (Վայոց ձորի մարզի Խաչիկ և Աղավնաձոր գյուղերի խոսվածքներ) և ծեռաց դըռմըղ (Վանի Կողպանց գյուղի խոսվածք) բարբառները:

Հայերենի բարբառների որոշ խոսվածքներում տրմուխ բառնունը գործածվել է այլ իմաստներով ևս: Օրինակ՝ ՀԲԱ նյութերում Սևերեկի և Արճեշի Եկմալ գյուղի խոսվածքներում բառնունը գործածվել է «եղան», իսկ Բեյլանի Սովոլուխ և Աթըխ, Նախիջևանի Ագնաբերդ և Կոտայքի մարզի Կաթնաղբյուր գյուղերի խոսվածքներում՝ «կալսած կալը մի տեղ ժողովելու փայտյա կոթավոր գործիք» նշանակություններով:

6. Ճանկոիկ: Բառնունը կազմված է ճանկ-ռ-իկ ձևություններից: Ըստ Հ.Աճառյանի՝ ճանկ/ճանգ-ը «կեռ, սուր և ժանկոր գործիք, կամ նաև թռչունի և գազանի մագիլ, ճիրան» փոխառյալ է պարսկերեն չոնգ «թռչունի մագիլ, մարդու ճանկ, կեռ, կորացեալ, թեքեալ» «որից փոխառեալ են նաև արևել. թրք. չոնգա «ճանկ, մագիլ», չոնգակ «միս կախելու կեռ»...»⁶⁰:

ՀԲԱ նյութերում ճանկոիկ տարբերակը գրանցվել է Արարատի մարզի Փոքր Վեղի բնակավայրի խոսվածքում, իսկ ճանգոիկ տարբերակը՝ նույն մարզի Բուրաստան, Արմավիրի մարզի Մարգարա, Իրանի Ղարաքյարիս և Ագնա ու Քյալավա գյուղերի խոսվածքներում: Հնչյունական ճանգըռիկ, ճանգըռիկ, ճանգըռիկ, ճանգըռիկ, ճաճըռիկ, ճանգոիկ, ճանկըռիկ տարբերակները գրանցվել են 26 խոսվածքներում՝ ընդգրկելով Մուշի (5), Ակնի (1՝ Ակն), Վանի (3՝ Վանք, Հուռթուկ, Նոր գեղ), Խոյ-Մարաղայի (15), Երևանի կամ Արարատյան (1՝ Ալիջան), պարսկահայոց (1՝ Հաջիաբադ) բարբառները: Արձանագրվել են չանգոիկ (Շուռուտ և Կյաղ/Նախիջևան/), չանգըռիկ (Աստապատ/Նախիջևան/, Դաջան/Փերիա, Իրան/), ջանգոիք (ք. Խարբերդ և Սվջոդ/Խարբերդ/), ջաճըռիք (Արմշատ /Շատախ/) տարբերակները: ՀԲԱ նյութերում գրանցվել են նաև՝ -իչ ածանցով՝ չանգոիչ (Մարզիյան/Գյափլա, Իրան/), առանց -ռ- սաստկականի՝ ջանգիզ (Չմշկածագ), ինչպես նաև ճանգըռնիկ (Բժնկերտ /Վան/) հնչյունական եզակի տարբերակները: Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղի խոսվածքում գրանցվել է ճանգըռոիկ տարբերակը:

Ս. Ամատունին վկայել է ճանկոիկ բառանվան գործածությունը Էջմիածնի Հայթաղ և վերջինիս շրջակա գյուղերի խոսվածքներում⁶¹:

⁶⁰ ՀԱԲ, հ. 9, էջ 184: *St' u նաև* Расторгуева В. С., Эдельман Д. И. *Этимологический словарь иранских языков*, т. 2, М., 2003, с. 319-321.

⁶¹ Մահակ վրդ. *Ամատունի, նշվ. աշխ.*, էջ 371:

7. Գալբարի: Ըստ Հ. Աճառյանի՝ բառանունը ծագում է թուրքերեն *gelberi* ձևից⁶²:

ՀԲԱ նյութերում բառանունը (գալբարի, գալբարի) փոցի նշանակությամբ գրանցվել է միայն Ղարադաղի Խանագահի և Ուրգուի ընկերակալների խոսվածքներում:

Ղարադաղում բառանվան՝ «փոցի» խոտ հավաքելու գործիք՝ նշանակությամբ գործածությունը փաստել է նաև Հ.Հովսեփյանը⁶³:

Հայերենի բարբառների որոշ խոսվածքներում գալբարի բառանունը ևս ունեցել է այլ իմաստներ: Ըստ ՀԲԱ նյութերի՝ Ալաշկերտի Ուչքիլիսա և Գեղարքունիքի մարզի Բանթաղ (այժմ՝ Զուլաքար, ՎԲ Ալաշկերտից) գյուղերի խոսվածքներում բառանունը գործածվել է «կալսած կալը մի տեղ ժողովելու փայտյա կոթավոր գործիք» նշանակությամբ: Պապենում գալբարի են անվանել «միրգը ծառից քաղող՝ պոկող ձողը», իսկ Համշենում՝ «դրան եղանակն բռնակը»⁶⁴: Վ. Բդոյանը նշում է, որ Շիրակի Ոսկեհասկ գյուղում գալբարի են անվանել քաղհան անելու հողորագը⁶⁵:

ՀԲԱ նյութերում գրանցվել են նաև «փոցի» հասկացության այլ բառանուններ՝ կակոան (16), սանդր (5), ակոան (5), քառեշտ (4), հուրսըլի (2՝ Նամակերդ, Ղարդուն/Փերիա, Իրան/), քիմելի (2՝ Նորաշեն, Սարդու/Ղարադաղ, Իրան/), չանգյալ (2՝ Ն. և Վ. Խոտանան/Սյունիքի մարզ/), Միլակերտ/Փերիա, Իրան/), ալաքեշ (1՝ Կոռնիձոր/Սյունիքի մարզ/), դասխալա (1՝ Վ. Խոգյան/Փերիա, Իրան/), խուզընհրվաքե (1՝ Նոր շեն/ԼՂՀ/), կրոանթի (1՝ Շապին Գարահիսար), դան (1՝ Շուռուր/Նախիջևան/), վազ (1՝ Լիվասիան և Ադրուլաղ/Զարմահալ, Իրան/), չաքաջազ (1՝ Հաբուս/Խարբերդ/), չոփկուլալի (1՝ Խոտ/Սյունիքի մարզ/), քուլուլուլըհաքե (Հին Թաղար/ԼՂՀ/), քուլաշ հրվաքիլ (1՝ Ղասմաշեն/Ղարադաղ, Իրան):

ՀԲԱ նյութերում չգրանցված տարբերակներ են արձանագրվել բարբառագիտական գրականության մեջ՝ մարգոս «փոցխանման գործիք, մարգոց» (Ալաշկերտի խոսվածք)⁶⁶, բորոնա «ցաքան» (ռուսերեն *борона* բառից⁶⁷) (լեհահայոց խոսվածք)⁶⁸:

Այսպիսով, փոցի գործիքը հայերենի բարբառներում կոչվել է ավելի քան 25 բառանուններով: ՀԲԱ նյութերում խոսվածքների քանակով լայն տարածական ընդգրկում ունեն փոցի (ավելի քան

⁶² Աճառյան Հ., *Թուրքերենի ազդեցությունը հայերենի վրայ և թուրքերենի փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մեջ, համեմատությամբ Վանի, Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառներուն* (=Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ), Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 199:

⁶³ Հովսեփյան Հ., *Ղարադաղի հայերը, հ. 1, Ազգագրություն, Ե., 2009, էջ 182*:

⁶⁴ Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Ե., 2001, էջ 228:

⁶⁵ Բդոյան Վ. Հ., *նշվ. աշխ., էջ 97*:

⁶⁶ Մաղաթյան Բ. Մ., *նշվ. աշխ., էջ 231*:

⁶⁷ Фасмер М. *նշվ. աշխ., հ. 1, էջ 196-197*:

⁶⁸ Աճառյան Հ., *Քննություն Առտիալի բարբառի, Ե., 1953, էջ 190*:

200 խոսվածք), տրմուխ (շուրջ 70), մանկեռ (43), ճանկոիկ (42) գրարի (34) բառանունները՝ իրենց հնչյունական տարբերակներով, սահմանափակ տարածական ընդգրկում ունեն կակրան (16), ցաքան (11) բառանունները՝ իրենց հնչյունական տարբերակներով, հազվադեպ հանդիպողների թվին են դասվում սանդր (5), ակրան (5), քառէշտ (4), հոսելի (2), քամելի (2), տափան (2), չանգյալ (2), գալբարի (2) ալաքէշ (1), դասխալա (1) և այլ բառանունները:

**НАИМЕНОВАНИЯ ПОНЯТИЯ “p'oc'x”
(ГРАБЛИ) В АРМЯНСКИХ ДИАЛЕКТАХ**

АБРААМЯН А. А.

Резюме

В инструментарии армянских земледельцев важное место занимали грабли. В армянских диалектах это понятие имело разные наименования – p'oc'x, c'ak'an, tap'an, manker, sandr, akran, kakran, čankrik, galbari, alak'eš, krant'i, k'arešt, grabli, trmux, k'ameli и т. д.

Наиболее широкое распространение по численности говоров имеют наименования p'oc'x (свыше 200), trmux (70), manker (43), ank-grik (42) grabli (34) (в их фонетических разновидностях), менее распространены наименования kak-gran (16), c'ak'an (11), к числу редко встречающихся наименований следует отнести sandr (5), akran (5), k'arpešt (4) k'ameli (2) и т.д.